

ԲԱԺԱՆՈՂ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշկարիչի համար	
Տարեկան	12 ֆր.
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի համար	
Տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »
Ամերիկայի համար	
Տարեկան	3 ֆր.
Վեցամսեայ	1.50 »

ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Իրանուցում տողը առաջին երեսին համար 40 սանթիմ. է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ. է. երեսին առաջին անգամներու համար 20 օրը զեղը կըլլայ:

Պաշկարիչի համար ձեռքի (15 ԱՆԻՒԿ)
Վստեայի համար ձեռքի 10 սանթիմ.

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՄՈՒ ՕՐԵՐԸ
Отговорникъ: Д-ръ Никола Бакърджиевъ

Կանակ եւ դրամ դրկեյ
Խնդրագրութեան հասցեին
—
Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Կրորդինիս եւ չեմ տրուի
Արտասահմանի համար ձեռքի (20 ԱՆԻՒԿ)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՉԻ ՎՃԱՐՈՂ
ԲԱԺԱՆՈՂՆԵՐՈՒՆ

Շարժումի տարեշրջանին 10րդ ամսին է որ կը լրանայ, ու գեա բազմաթիւ բաժանորդներ սանդիմ չը իսկ չեն բարեհաճած վճարելու: Այդ բաժանորդները արգարանալու ոչ մէկ միջոց ունին, որովհետեւ իրենց յօժարութեամբ են ստացած:

Խմբագիր մը պարտաւոր չէ ամէն ժամանակ իր բաժանորդներուն յիշեցնելու իրենց պարտքը: Բանի որ թերթը կը ստանան պէտք է որ իրենց բաժնեգիրն ալ վճարեն: Պարտաճանաչութեան ամենատարրական գիտակցութիւնը ունեցող անձը կը զգայ թէ թերթը կանխիկ ծախքեր ունի, զորս հայթայթելու համար, միակ աղբիւրը բաժնեգիրներն են: Անտարբերներու հանդէպ վարուելու կերպը գիտենք, բայց գեա քիչ մըն ալ կը սպասենք, յուսալով որ, այլեւս բաժանորդները պիտի ըմբռնեն խմբագրութեանս դրամի ստիպողական պէտքը, քանի որ հիմա թուրքերէն յաւելուած հանելու համար, արդէն հարկադրուած ենք նոր ծախքերու մէջ մտնել:

Իսկ նոր բաժանորդ գրուողներուն համար միանգամ ընդ միշտ կը յայտարարենք թէ, պէտք է իրենց հասցէին հետ թերթին բաժնեգիրն ալ զրկեն, առանց որուն թերթը չուզարկուի:

ՍՊԱՍԵՆՔ ԵՒ ՅՈՒՍԱՆՔ

Քրիւկէր հասաւ Եւրոպա: Տարագիւղիկ ալեւոր ծերունին թողուց իր հայրենի հողը, թողուց իր սրտահատոր սիրականները, թողուց իր փայփայած հրապէնը և եկաւ քաղաքակիրթ Եւրոպայի իր գառնակսկիծ ցաւն ու մորմոքը յայտնել և անոր դարման մը խնդրել:

Նախ այցելեց Ֆրանսա: Անոր տաք արիւն զաւակները համակրական ամենատար զգացումներով և խանդավառ, հո-

գեանդն ցոյցերով պատուեցին իրենց ալեւորդ հիւրը, լացին ու լացուցին Քրիւկէրը: Արցունքը ծայրայեղ տրտմութեան եւ տարապայման ուրախութեան անբաժօն ընկերը եղած է միշտ և պիտի ըլլայ յաւէտ:

Անցաւ Ռէնը, Հիւսիսի կը մօտենար. գերմանական ժողովուրդը չուզեց վար մնալ իր դրացի թշնամիէն: Նոյն խանդավառ ցոյցերը, նոյն ջերմ ընդունելութիւնը սարքուցանալ թրանսվալի կողմն էր և է հասարակաց կարծիքը, որմէ թերեւս աւելի իրախոսուած և գոտեպնդուած՝ ափ մը քաջամարտիկ ժողովուրդի քաջամարտիկ պարագլուխները, Տըվէթ և Շթայն, նորանոր յաղթութիւններ տարին հոն, վարը թագուհի-կայսեր զօրքերուն վրայ:

Բայց տխուր է խոստովանիլ, որ հասարակաց կարծիքը երկրորդական դեր մը կը խաղայ քաղաքական խնդիրներու և գիւտնագիտական հարցերու մէջ: Եւրոպական կառավարութիւնները մասնակից չեն իրենց վարած ժողովուրդներուն արտայայտած զգացումներուն, և կան երկիրներ ալ, ուր ժողովրդեան կամքին քով կայ թագապսակ գլուխի մի կամքը:

Գերմանիոյ մէջ ժողովրդական կամքին քով կայ Բայքէրին կամքը: Վիլհելմ անամթաբար և թերեւս առանց խղճի խայթի յայտարարեց թէ՛ չի պիտի կըրնայ ընդունիլ թրանսվալի նախագահը: Քրիւկէր սրտէն զարնուած՝ դարձաւ գնաց գլխիկոր, կորոքամակ իր արիւնակից ազգակից ցեղին քով:

Օթոնին խլէզ ձագուկը, Պիլմարքին երէկուան ձեռնասունը, երէկ համակիր զգացումներ կը տածէր պօէր ազգին նկատմամբ, իսկ այսօր յանկարծ սառն անտարբերութիւն մը ցոյց կուտայ անոր պատկառելի նախագահին հանդէպ: Ինչո՞ւ զգացումներու այս յանկարծական փոփոխումը. վասն զի Ալպիոն աղուէսական խորամանկութեամբ զիտցաւ նետել Բայքէրին առջեւ

կրծելու մէկ քանի ոսկորներ:

Ինչ որ իր երկաթասիրտ վարպետը հայկական կոտորածներու ատեն անխղճօրէն կը յայտարարէր թէ «ամբողջ հայերուն սուկրոտին չի փոխեր երբէք բրուսիացի զինուորի մը ոսկորին հետ», նոյնը կը կրկնէ այսօր լռելեայն իր quasi խորամանկ սանիկը պօէրին նկատմամբ:

Գրչիս առջեւ կուգայ կր ցցուի յանկարծ կլատսթոն իր ամբողջ մեծութեամբ: Արգարեւ մեծ եղաւ Պիլմարք, սակայն իր ազգին շահախնդի գասակարգին համար մի միտայն. իսկ կլատսթոն իսկապէս մեծ եղաւ իր ազգին և ընդհանուր մարդկութեան համար:

Մաճուպան, իրլանտական և հայկական խնդիրները որոշ գծերով պատկերացուցին արարատ աշխարհի կլատսթոնի վեհ հոգին, լայն միտքը և փափուկ սիրտը, իսկ Ալլաւ-Լօրէն երեւան հանեց Պիլմարքին ստոր ու զձուձ հոգին, նեղ ու անձուկ միտքն ու երկաթէ սիրտը:

Պատմութիւնն անաչառ է սակայն, առաջինին վերապահած է բարձրացում ու սրտարոխ օրհնութիւն, երկրորդին՝ անկում ու քսամնասարսուռ անէճք:

Քաղաքական արդի պարագաներու մէջ՝ պօէրական արդար գատին համար միջամտութեան մը անկարելիութիւնը յայտնապէս կը տեսնուի, սակայն մարդ իր վշտալից օրերուն մէջ միշտ կը յուսայ գեղած իծաղ ապագայի մը: Յոյսը ինչպէ՞ մարդուն սփոփիչ միջոցարարութիւնն է: Ինչո՞ւ, շուտ և շատ շուտ իրականանար այդ յոյսը և մննք բարեբազմութիւն ունենայինք տեսնելու պետական այն մեծ մարդը, որ, հետեւելով մարդասէր Մերունիին մարդասիրական օրինակին, նախաձեռնարկողն ըլլար իրաւարարութեան բոժոժը կախելու Ալպիոնի վրէժն:

Այդ պետական մարդը պիտի արժանանայ բնականաբար մարտիրոսացեալ ազգին յաւիտենական երախտագիտութեան, և մարդկութեան քաղաքակիրթ ու

լուսաւորեալ մասին հիացման ու պաշտումի առարկան պիտի դառնայ յաւէտ:

Սպասենք և յուսանք:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 1 Դեկտեմբեր

Ձմեռ է, խիստ ցուրտ կընէ Հայկական բարձրալեռնային վրայ: Ձիւնը կոխեր է հայ վիլայէթները, Լեռնոտ Կիլիկիան ալ ճերմակ սաւանով ծածկուեր է, ձիւնի հաստ շերտերը իրենց տակն առին Կիլիկիոյ կաթողիկոսութեան բազմաչարչար խնդիրը:

Շէֆֆիք պէյի սկսած Պոլիս ելող հայ գաւառացիներու արգիւնաւոր որսորդութիւնը իր նախկին սուր կերպարանքը փոխած, քիչ մը մեղմած է: Սեպտ. Հոկտ. ի սմբական ձերբակալութիւնները այլեւս չկան. հիմակ հայ ժողովուրդը թէ հոս և թէ գաւառները՝ ցըցուած է «չամփուր» և բռնուած թոյլ կրակի վրայ: Բոցերը չեն ելլար որ մէն մարդ տեսնայ, ազմուկ «փաթրուր» իյնայ, օգնութեան գէթ պաշտօնական ձայներ լսուին, սիրտերնիս միխթարեն... Ոչ, հայ ժողովուրդը կամացուկ մը կը տապկուի, կը տժտժայ հանդարտ կրակի վրայ, ճիգ մը հանելու հնար չունի, բերանը ամուր գոցած են: Մուխ մը, լոկ մուխ մը ամպի պէս վճր կըլլայ, իսկ քաղաքակիրթ Եւրոպան մուխ չուզեր. բոցեր, լայս «փաթրուր» կուզէ որ ականջի բամբակները հանէ մեր վայնասունը լսէ:

Յուրտ է, ցուրտ. Օրման փաշա, գուն չօգնեցիր 400—500 ձերբակալուած գաւառացիներուն, անոնք քսորուեցան իրենց բնակավայրեր, բայց ճամբան սուռեցան կամ պիտի սառին: Յուրտ է, հաց չի կայ անապատուն են: Գաղանները և թռչունները բոյներ ու որջեր ունին, իսկ Հայկայ որդիքը իրենց լայնածաւալ ու

բարեբեր երկրին մէջ գլուխ գնելու անկիւն չունին:

Օրման փառա, խուլանաս, լսէ քու չը պաշտպանած գաւառացիներէ մէկէն, (որ հրաշքով տեղն է հասեր) Տիգրիկցիի գրած նամակը:

«Հասայ տունը Ձիփ չի փրկար են, հազնելու զգեստ չունին: Անկողին չի կայ, գետնի վրայ կը պառկին: Երբ եկայ, հիւանդ էի: Ելան գիւղը ինծի համար անկողին մը գտնելու: Միայն X. ենց տունը պտան, մէկալները ամենքն ալ մեր օրերն էին: Հացի խիստ պակասութիւն կայ: Յորենը սուղ չէ, բայց ստակ չկայ որ առնեն: Ձմեռը անօթի պիտի մնանք: Աստուած հասնի օգնութեան»:

Մինակ աս չէ գրողը. Օրման ամէն քարտականի նամակէ նոյն թշուառութեան մուրացքի ու հեծկլտանքի ձայնը կուգայ: Ինչու է ցուրտ, ո՞ւր գիւղէ խեղճ հայր:

Ձի կարծէք թէ հայկական գաւառներու այս վիճակը քանի մը քարտականներու յոռետես տրամաբուծեան արդիւնքն է: Ո՛չ, միայն այդ նամակները չեն թշուառութեան կսկծեցուցիչ ողբը մեր ականջը հասցնողները:

Ռուսական հիւպատոսները հոս դեպքանտան զրկած են Վանէն, էրզրումէն, Բաղէշէն, Տիգրանակերտէն, Սեբաստիայէն, Խարբերդէն մանրամասն տեղեկագրեր: Եւրոպ. թերթերը կը սեն որ՝ ըստ այդ տեղեկութիւններուն հայկական նահանգներու վիճակը խիստ զէշ է: Բայց մենք աւելին կը քննենք: Յաջողեցանք կերպով մը

ճանօթանալ Վանէն եկած տեղեկագրի բովանդակութեան գլխաւոր կէտերուն հետ: Քսամենլի, զարհուրելի է. մարդու մազերը կը ցցուն այդչափ թշուառութեան առաջ: Խոնչպէս կրնայ մարդ կոչուած էակը դիմանալ այդչափ նեղ ու անտանելի վիճակի մը...

ԲԱԺ (Մնացեալը յաջորդով)

ՆԱՄԱԿ ՌՈՒՍԱՍՏԱՆԵՅ

ԽՈՐԷՆ ՍՏԵՓԱՆԷՒ ՄԱՀԸ

Նոր ստացած կովկասեան թերթերէն կիմանանք որ Խորէն եպիսկոպոս Ստեփանէ վախճաներ է, թողով 25,000 ռուբլիոց կտակ մը՝ որ պիտի գործադրուի, երբ 14 միլիոն ռուբլի ըլլայ. այսինքն 130 տարի վերջը:

1897 թ. ինչի տօնին տոնջին եւ վերջին անգամ ըլլալով զինքը տեսայ Ղրիմի Ս. Խաչ վանքին մէջ, Վանքի տօնն էր. զրիմցիներ եւ բազմաթիւ գաղթական երկրագործներ խմբուել էին հոն. Խորէն եպիսկոպոս կրակ կտրած էր, ալ ու ձախ կը վազէր, կարգադրութիւններ կընէր եկեղեցիի, մատաղի, բնակարանի մասին, կը բարկանար, կը յանդիմանէր. իր հետ տեսնուելէ յետոյ, իր սան՝ Ներսէսեան չըջանաւարտ Ա. Շ. Մ. ի հետ եկեղեցիի դրան առջեւ մի հասարակ գերեզմանաքարի մօտ կանգնած կը խօսէինք մի քանի ճանօթներով. խօսակցութեան միջոցին Ա. Շ. Մ. անզգալի կերպով մի ոտը դրած էր գերեզմանաքարի ծայրին. մէյ մըն ալ տեսնես Ստեփանէ մրմռալով վար կիջնայ բնակարանէն եւ մօտենալով մեզ, կը պոռայ Ա. Շ. ի երեսին.

«Մէկն էլ էս խիտոյն է՛, ոտքդ ա՛ն վար, չը համարձակես ոտքդ դնել այնպիսի մի քարի վրայ, որի տակ հանգչում են ժողովրդի մի սիրած եկեղեցականի նշխարները»:

Ա. Շ. ապուշ կտրեցաւ, մենք անկէ աւելի:

— Այս էր այնքան հոգակած եւ ազատամիտ Ստեփանէն...

Հարցումը կուզեցինք իրարու. եւ այդ ապաւորութեան տակ, քիչ յետոյ իր կրակոտ եւ այլասերած զրիմցիներուն ձաղկող քարոզը ազգեցութիւն չընէր մեր վրայ:

Ճաշէն վերջը երբ առանձին կը մնանք, իր սանը բացատրութիւն կուզէ եղած անարգանքի համար. մենք եւս մեր զգոհութիւնը կը յայտնենք. Ստեփանէ կը փրփրի, սենեակին մէջ պոռոյներ կը գործէ, իր ամբողջ ճարտասանութիւնը կը թափէ իր վարմունքը պաշտպանելու համար, բայց հետզհետէ հանգարուելով քարի շնչով մը կը խոստովանէր իր սխալը. ազատամիտ մարդը այդպեղ երեւան կը գար, որչափ կուշտ ու կը բռտ էր իր վարմունքի մէջ, նոյնքան համբերող էր իր սանին սուր քննադատութիւնները լսելու եւ վեհանձն՝ իր սխալը խոստովանելու:

Պատկերութեան միջոցին կը գանգատէր իր գրութեանն, կը վախնար որ իրեն թունաւորեն կամ սպանենն ուսական գաղտնի գործակալները. առաջարկեցինք արտասահման անցնիլ եւ հոն նւիրելի տաճկահայերու գասին:

«Պարոններ, իմ էլ ցանկութիւնը դա է, բայց հրաման չեն տար. զեռ երէկ Հայրիկից նամակ առի, որով իմաց էլ յաւիտ թէ ներքին գործոց մինիստրութիւնը այն պայմանաւ թող կը տայ արտասահման գնալ, եթէ նախապէս ուսաց հպատակութիւնից դուրս գամ»:

— Աւելի լաւ, ելի՛ր Սրբազան:
— «Ձե՛ տղաքներս, եթէ ուսաց հողի վրա ուսաց հպատակութիւնից դուրս գամ, ինձ անմիջապէս կը բանտարկեն եւ կը պատժեն, մինչդեռ այժմ այս մեռած շրջանակում փակելով գոհ են լինում»:

— Միջոցներ կան՝ իրրեւ աշխարհական փախչելու, զժ. ար. չէ՛. Սրբազան:

— «Ո՛չ, ո՛չ. ամէն կողմ ուսական լրտեսներ կան, ի՞նչ կը լինի»:

Իմ գրութիւնը եւ պատուր, եթէ ճանապարհին ինձ աշխարհականի զգեստով բռնեն. չնորհակալ եմ, աս մեն կերպ պիտի աշխատիմ լեգալ կերպով այս զգոթից ելնելու. է՛լ համբերութիւնս հատաւ, այս նոյեմբերին առանց հրամանի էլ միտնիմ պիտի գնամ եւ գլխիս ճարը նայիմ»:

Եւ անկէ վերջը իրեն այցելութեան գնացող մանօթներու շարու. նակ կը կրկնէր թէ «անպատճառ էջմիածին գնալու եմ գալ ամսին». բայց երբի միշտ ուզեց լեգալ կերպով էլ միտնիմ երթալ եւ անհասարակ շտուգեցած, անակնկալ մահը վրահասաւ թիֆլիզի մէջ եւ վերջ դրաւ կրակոտ եկեղեցականին բոլոր ազգասիրական եւ փառասէր ծրագիրներուն:

Երբ իրեն վստահելի գործիչներ կառավարկէին գոնէ իր ազգեցութիւնը գործածել եւ նիւթապէս օգնութեան հասնել տանջող Տաճկահայաստանին, ամեն անգամուն էլ հետեւեալը կը պատասխանէր:

«Տղաքս, շատ մի նեղեք ինձ, որին դիմում անում ես, մատնութիւնից շատ եմ վախենում, դուք չը գիտէք, ինձ լրտեսում են, ուղղակի անուանս նամակ իսկ չեմ կարող ստանալ. զժբախտաբար ես էլ փող չունեմ որ անձամբ օգնեմ. ընդունեցէք այս 50 ռուբլին. թէեւ ամաչում եմ»:

Բայց պատճառական կտակը կը հաստատէ թէ 25,000 ռուբլի ունի եղբր, որը պիտի գործադրուի իւրիպէս երեսուն տարի վերջը:

Եթէ բոլորովին ազգատ մեռնէր այդ բազմաշխատ եկեղեցականը շատ աւելի յարգելի պիտի լինէր իր անշահաւէր գործիչի յիշատակը. դաւը այն է, որ փող զիջելու ունակութիւնը ունենալէն զատ, այնպիսի աննպատակ կտակ ըրաւ, որ քնաչի համապատասխաններ իրենց Ստեփանի մասին մինչեւ հիմա կարգուած գաղափարին: Որչափ կը յիշեմ Սարգիս Եպս. Հասան-Ջաւախացի ալ 16 տարի առաջ մի կտակ ըրաւ, որով իր 25,000 ռուբլի գումարը 125 տարիէն 12 միլիոն լինելով պիտի գործածուի զպրօններու եւ այլն բարե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐԱՆԱԾ ԹՈՉՆԻԿ

III.

Վարանած Թոչնիկի գուշակութիւնները ինձ վրա շատ վատ ազդեցին: Հետեւեալ ամբողջ օրը միտքս զրադոված էր նրա սեւ գուշակութիւններով. ոչ մի տեղ հանգիստ չէի կարողանում գտնել եւ թափառում էի փողոցէ փողոց: Այդպէս թափառելով անզգալաբար եկիւ հասել էի Թոչնիկի տունը: Հէնց որ նկատեցի այդ իսկոյն որոշեցի ներս մտնել եւ կրկին նրա հետ խօսել. վիճել հետը, ապացուցանել որ իր գուշակութիւնները եւ երթարկութիւնները բոլորովին անհիմն են:

Նոյն տղան ներս հրամայեց. Թոչնիկը բոլորովին գալի ցցած, անկողնի մէջ նստած էր: Ինքն իր ոտը ձեռք սեղմեցինք եւ ես տեղաւորվեցի նրա մահճակալի մօտ:

— Է՛հ, ինչպէ՞ս էք հայր սուրբ:
— Լաւ չեմ, սիրելիս. երեկվայ

վրա աւելի վատ եմ զգում ինձ: Բացի ֆիզիքական թուլութիւնից եւ բարոյապէս հիւանդ եմ: Ճշմարիտ ես շատ թոյլ կերպով վարվեցի դէպի իմ պաշտպանելիք խնդիրը— միութեան հարցը: Գիտէք թէ երեկ ֆիզիքապէս որչափ տկար էի, չունչս կտրվում էր, երբ ինձ վրա ճնշում գործ դրին, կամ «հախ դիմը» ընդունել, կամ թէ հեռանալ այդ ժողովից: Ես պարտաւոր էի հեռանալ. կամ ամեն ճիգ թափել ժողովականներին սպացուցել միութեան անհրաժեշտութիւնը, Ուժ չը կար, ֆիզիքական ուժ: Ու ես յայտնեցի իմ համաձայնութիւնը: Երեկ դուք այդ կէտի վրա իմ ուշադրութիւնը հրաւիրեցիք. ես արդարանալ ուզեցի, բայց այսօր երբ խեղքս գլուխս եկաւ, տեսայ որ սխալվել եմ: Այն միտքներ ինձից պատասխան են սպասում: Այո կամ ոչ: Իսկ ես դրա փոխարէն պէտք է ասեմ թէ՛ ինքս արդէն միացել եմ: Բայց ինչպէ՞ս ասեմ, խնդրեմ ասացէք, ինձ չը համոզեցին միանալ, այլ առաջարկեցին կամ միանալ եւ կամ թէ հեղադրեմ ժողովից: Այդ ինչպէս հաղորդեմ միտքներին. չէ որ ծաղրելի կը դառնամ:

— Ճշմարիտն ասած, այդ ձեր վարմունքը ինձ վրա բաւական ազդեց,

պատասխանեցի ես, բայց ձեր գուշակութիւնները, ձեր կասկածները զանազան անհատներին անկեղծութեան համարն աւելի շատ մտածելու տւին: Ինչ հիման վրա ձեր մէջ այդպիսի կասկածներ են ծնել:

— Հէնց այն հիման վրա, որ երեկ այդ պարոնները ինձ միջոց չը տւին իմ առաջարկած խնդիրը պարզելու եւ պաշտպանելու. նրանք զօրով իմ ձայնը խեղդեցին, օգտվեցին իմ ֆիզիքական թուլութիւնից, իմ անօրումով վիճակից. Եթէ անկեղծ մարդիկ լինէին այդպէս չը պէտք է վարվէին: Նրանք զգացին որ խօսելով կարող եմ գոնէ մի քանիսի վրա ազդել եւ այդ արմատական միջոցին զիմեցին:

— Բայց հայր սուրբ, ինչի՞ չընդունել որ նրանք իսկապէս համոզված են թէ անկարելի է միութեան կայացնել այն մարդկանց հետ, որոնք բռնակալական ձգտումներ ունեն:

— Այո, կարելի է ընդունել, բայց ես աւելի համոզված եմ որ սրանք էլ նոյն բռնակալական ձգտումներ ունեն, սակայն համոզված լինելով որ մի քանի բռնակալ միանին պետ չեն կարող դառնալ. ուստի իրենց մարմինն ուսակալարական ձեւ են տալիս:

բայց հաւատացած եղէք որ նոյն միտքով ես գրութեան գրութեան պէտք է տանն գործերը: Նրանց հետ չեն ուղում միանալ, որովհետեւ նրանց իրենցից աւելի ուժեղ են գտնում:

Ա՛խ, ինչի՞ ես հիւանդ եմ, ինչի՞ այսչափ տկար եմ... Թէ մի քիչ ուժեղ տեղը կը լինէի՞ն, ես հնար կը գտնէի իմ սխալ ուղղելու, բայց հիմա անկարող եմ, նոյնիսկ վախենում եմ որ երկար չսպանեմ. այսօր կրկին արհւն թէպէտ... արթնել, հասկանում է՞ք, Ցանկութիւն ունենալ գործելու, ամբողջովին ըմբռնել հայրենիքի վատ կացութիւնը, տեսնել նրա ջղաճգունները եւ անկողնին միտնում մնալ... անտանելի է, Սուրբն, անտանելի է:

Անգութ է բնութիւնը. չէք իմանում ինչեր են կատարվում իմ ներքին աշխարհում. չէք իմանում թէ մտքս մէջ ի՞նչ ծրագրերի կան, սրտիս մէջ ի՞նչ եւանդ... Եւ այդ բոլորը դուր, դուր են անցնելու: Չը կարծէք թէ ես կիսանքս եմ ավտոստում, ոչ. չը կարծէք թէ աշխարհը ինձ համար սիրելի է. ոչ, աշխարհը սիրելի չէ ինձ. դրան ապացոյց ձեզ այս սեւ վերարկուն:

— Բայց ի՞նչ էք ասում հայր սուրբ, ի՞նչի այդչափ յուսահատու-

նպատակ հաստատութեանց : Գուցէ մի Հասան-Չալալեանց իր որ եւ է ազգադաւ վարմունքը մի կիր- պով մոտացնել տալու համար, երա- զած լինելով իրենց հարկաւորութեան կացութեանը ազգայ սերունդը, բայց մի Ստեփանէ կարիք չունէր այնքան հեռու ժամանակի օգնու- թեան դիմելու :

Այնպիսի մի ատեն, երբ հազարու մի այրող ցաւերով կը առապի հայ ժողովուրդը, երբ վերջապէս հայ ցեղի լինել չը լինելու խնդիրը կը վճռուի այնքան կատաղի կերպով, այնպիսի մի ճգնաժամի մէջ, երբ հայ հա- րուստները քարէ արձաններ կտրած խուլ կը ձեւանան ժողովրդի օրհա- սական ճիշերուն : Խորէն Ստեփանէի 25,000 ռուբլի գումարը ահագին սիւ- փանք պիտի պատճառէր ցաւող սրտե- րու : Եթէ հայրենիքի փրկութեան գործին համար այդ գումարը շատ չնչին կը նկատէր սոցիալական Սեր- րազանը, գոնէ կարող էր մի քանի հարիւր սրբեր ազգին պարգեւել : մի քանի հարիւր սրբեր մասէն փրկ- կել, ինչ ընելու են ձեր միջոց- ները 125—130 տարի յետոյ, երբ հայի բազմը վաղուց վճռուած կը լինի : վատ թէ լաւ, եւ ձեր մի- լիոնները ո եւ է դրական օգնութիւն չեն ընել հայ ժողովրդի գոյութեան հարցին :

Իմ նպատակը չէ այստեղ նսեմա- ցնել մի հմուտ եկեղեցականի յիշա- տակը, սակայն մի թէ կարելի է զսպել ցաւն ու զայրոյթը այն ան- ըմբռնելի անտարբերութեան դէմ, որ կը կրեն իրենց Ստեփանէի պէս զգայուն ճանաչած մարդիկ դէպի հայկական ողբալի իրականութիւնը : ամօթ, հազար ամօթ :

Յանձին Խորէն Ստեփանէի հայ ե- կեղեցականութիւնը մի անգամ ալ ապացուցեց որ նա ժողովրդէն կարած է : այլեւս անոր սիրտը չի բարախեր ժողովրդի տառապանքնե- րով, նա կասաւ է, եւ անոր ամե- նալաւ տարբերի մէջ իսկ միս ու արիւն է դարձրած զնորական փառա- սիրութիւնը :

Կաթողիկոս լինել Ս. Լուսաւորչի գահին վրա, կամ միլիոններ կտակել

հարիւրաւոր տարիներ յիշելու հա- մար : Ետ միամիտ են ամեն անոնք որ բարձր եկեղեցականներու վրա յոյսեր կը դնեն, հայ հարուստ եւ հայ եկեղե- զեցական մեծնոյն տիպիւն են, շա- հասէր, անզգայ եւ անտարբեր : Խորէն Ստեփանէ մեծ մարդ ծնաւ, բայց փոքրոյի մեռաւ : ամօթ : Կ. ՆՈՒՍԳ Թէոսոսիա, 22 Նոյեմբեր

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ, Երկուս Որբախնամ Ընկերութեան Հայոց Վառճաշի

Պատիւ ունինք յայտարարելու թէ, ընկերութեանս անունով խնամուե- լիք որբերու թիւը եօթի — երկուքը աղջիկ — հասած է, որոնք կը խնամ- ուին Վանայ, Սեբաստիոյ, Ակնայ, Կեսարիոյ եւ Ջէյթուքի որբանոցնե- րու մէջ : Ուստի գործադիր ժողովս կուզայ հրապարակաւ իր խորին շնորհակալութիւնը յայտնելու ընկե- րութեանս այն արգոյ անդամներուն որոնք ութը ամիսէ ի վեր կը շարու- նակեն իրենց անդամակցութիւն : Նաեւ խորին շնորհակալութիւնն իս եօթմասնունէն աւելի այն արգոյ ազգայնոց որոնք վերջերս թէ ան- զամակցութեամբ եւ թէ նուիրա- սուութեամբ սիրով մասնակցեցան սոյն անկեղծակեցական եւ վսեմ զոր- ծին :

Յուսով ենք թէ, ներողամիտ պիտի ըլլան այն արգոյ ազգայնիք որոնց բնակարանները եւ գործատեղիները ծանօթ չեն գործ, ժողովոյս, եւ մոռ- ցուած ըլլալով, պիտի փութան մեզ դիմել մասնակցելու սոյն կենսա- կան գործին :

Վստած ենք թէ, արգոյ հայ հա- սարակութիւնը առանց կուսակցա- կան եւ ինչ ինչ նկատումներու, պէտք եղած նիւթական եւ բարոյական ա- ջակցութիւնն եւ քաջալերութիւնը չը պիտի զլանայ մեզ, որով պիտի կարենանք խնամելիք որբերունս թիւը 10—12 բարձրացնել, մահուանէ

մինչեւ բոլորովին հաւատարմ, եւ եթէ այդ հաւատը չը գոյանայ, գոնէ յուսախաբութիւնը չի լինի, Գիտէք ինչ ստուարի բան է յուսախաբ լի- նելը, Ահա ես, որչափ մեծ հաւատ ունէի որ այս սեւ զգեստով մեծ օ- գուտներ պէտք է կարողանամ բերել իմ ժողովրդին, իմ հասարակութեան, որովհետեւ իմ կարծիքով այդ սեւ զգեստով իբր հասարակական գործիչ աւելի ազատ պէտք է լինէի Բայց ո՞ր է այդ ազատութիւնը, ընդհա- կուտակը աւելի կաշկանդեցի ինձ : Ազատութիւնս տի յայնպիսի մարդ- կանց ձեռք, որոնց, առանց այս զգեստի, տանս չէմքից ներս մտնել չէի թողնի : Եւ այսօր խոշոր սեւա- զգեստները ինձ քլում, հալածում են, որովհետեւ զգում են թէ այս սեւ զգեստը լոկ արտաքուստ է :

Եթէ համոզված լինեմ որ պէտք է առողջութիւնս գտնեմ, վաղվանից կը պատեմ այս վերարկուն, աղատ համարձակ կը շարունակեմ ծառայել իմ սիրած գործին : Ի՞նչ է, բանտ պէտք է՞ դնեն ինձ, թող դնեն, Այդ բանտում աւելի ազատ կը լինեմ, քան այս սեւ վերարկուի մէջ . . .

— Իզուր էք ամէն ինչ այդպէս մտալ գոյնով սեւնում հայր սուրբ, ձեր ֆիզիքական փկարութիւնը ուղ-

ազատելով այն հէք որբերու կեանքը, որոնք ապագայ հայութիւնը պիտի կազմեն :

Մնամք յարգանքով ի դիմաց Գործ, Ժողովոյ Ատենադպիր Ատենապետ Յ. Կ Ճանկիրեան Տ. Շախաբեան Վառճա, 30 Նոյեմբեր

ԻՇԽԱՆ ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆԻ ՅՐԱՆՍԱՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԸ

Գինն է 25 ֆրանք : Երկրորդ հատորը արդէն մամուլի տակ է, գինը նոյնպէս 25 ֆրանք է : Պէտք է դիմել կամ հեղինակին 108 Avenue de Neuilly, A Neuilly Sur Seine կամ Բիւզանդեան գրատուն Սեզրոս խան թիւ 5 Ղալաթիա (Պօլիս)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Եւրոպական թերթերը կը հա- ղորդեն որ հակառակ Բ. Գրան շեռագրով հրամանին, Պիթլիսի վալին դեռ ազատ չէ արձա- կած Մուշի առաջնորդ Բարկէն վարդապետը : Պիթլիսի առաջ- նորդ Եզիչէ վարդապետ որ Մուշ հրաւիրուած էր նոյնպէս ձերբա- կալուած է :

— Մոսկուայի Հազարեան ճե- մարանի հանգուցեալ տեսուչ Գէորգ Քանանեանի այրին 40000 ռուբլի նուիրած է Սպահանի թեմի հայ գիւղերուն մէջ դըպ- րոցներ բանալու համար : Այդ փափագը գործադրելու համար Բագարատ վարդապետ Քալաքալ- եան թէհրան մեկնած է արդէն :

զակի ազգի է եւ ձեր հոգեկան արա- մադրութեան վրա : Վաղը կը կազ- մուրվէք եւ կը տեսնէք որ ամեն բան այդպէս մտալ չէ, որչափ երեւակա- յում էք, Գործի մէջ այդ մտալ գոյ- ները կը կորցնեն իրենց թանձրու- թիւնը, ամեն իր, ամեն անհատ եւ ամեն երեւոյթ իրենց բնական գոյ- նով կը ներկայանան ձեզ :

— Իզուր էք կարծում որ տկարու- թիւնս է պատճառ իմ այդ արա- մադրութեան : Ի հարկէ այդ էլ իր որոշ ազդեցութիւնը ունի, բայց ոչ այնչափ, որչափ դուք կարծում էք : Առողջ եւ տկար ժամանակի մէջ տար- բերութիւնը այն է որ, առողջ իզամ միջոցիս ես կուր եմ մղում, իսկ հի- ւանդ ժամանակս զրկվում եմ այդ առաւելութիւնից . . . Եւ ինձ տան- ջանք պատճառողը, այդ առաւելու- թիւնից զրկվելն է :

Այդ խօսքերը արտասանելուց յե- տոյ՝ Թոշնիկը խոր հառաչեց ու զլուխը իջեցրեց բարձի վրա : Նրա աչքերը խոնաւ էին : Նա արտասովում էր, բայց ուղեց պահել իր արտա- սուքը . . .

Պէտք չէ չափազանց յուզվեցի եւ նստած տեղս գամվածի պէս մնացի . . . չը զի- սելի ինչ անեմ, նստեմ, երթամ, խօսեմ թէ լո՞ւսմ :

և Նահէն արտօնութիւն ստանա- լէն յետոյ, Սպահան պիտի երթայ պէտք եղածը անձամբ տնօրինե- լու համար :

— Վանէն գեռ վերջերս հա- ղորդած են թէ «հացը առատ է ու աժան» :

Հացի առատութիւնը առեւ- տուրին ալ զարկ տուեր է : Անց- եալ տարիներու հացի սղութիւնը եւ աղքատութիւնը ամենքն ալ ստիպեր է երկրագործութեամբ պարապել :

— Վանի առաջ, տեղապահ Սա- հակ վրդ, Բագրեւանդեան իր թեմին վանքերուն տեղեկագիրը շրկած է պատրիարքարան :

— Հանգուցեալ Խորէն եպիսկ, 66 տարեկան էր : Էջմիածնէն թիֆլիս վերադարձած միջոցին մտեր եւ հիւանդացի է : մահ- ուան պատճառը այդ հիւանդու- թիւնը եղած է :

— Պուրկազէն Ուն կը գրէ մեզ : «Վէսէյո» հայ գերասանական խումբը տեղւոյս Ազգ. վար- ժարանի ի նպաստ ներկայա- ցում մը տուաւ : Տեղւոյս զինուո- րական հրամանատարը բարե- հաճած էր նուագածու խումբը ձրի շրկել, եւ անձամբ ներ- կայ ըլլալ : Ներկայ էին տեղ- լոյս առաջնակարգ պուլկար, յոյն եւ հրէայ վաճառականներ : Թա- տերասարհը այնպէս լեցուած էր որ նստելու տեղ անգամ չէր գտնուեր, շատեր որոնք կանխաւ ստմսեր չէին առած ետ գար- ձան :

Թատերասրահէն ժողովուրդը գոհունակութեամբ մեկնեցաւ :

Պուրկազի հայերս խորին շնոր- հակալութիւններ կը յայտնենք յիշեալ խմբի անդամոց, եւ կը մաղթենք յաջողութիւն այդ յարգելի խմբին, որ գիտէ

թիւն, քիչ մարդիկ կա՞ն որ արեւն են թքում եւ երկար տարիներ են ապրում :

— Այո ապրում են, որովհետեւ ի- րենց նպատակը լինում է միայն ապ- րել, զրաղվում են միայն իրենց զոյութիւնը պահպանելու խնամքով : Իսկ ես այդ չեմ կարող անել, Եթէ ապրեմ, պէտք է գործեմ, եթէ ապ- րեմ, պէտք է ժողովրդի հետ եւ ժո- ղովրդի մէջ լինեմ : Եթէ ապրեմ պէտք է եւ կուր մղում ինձ չըջապա- սող հանգամանքներ, իմ դէմ գուրս եկող խոչնդոտներ չէմ, որոնք ինձ արդիւրում են իմ հասարակական ձրգ- առումները իրագործելու :

Հա՛, ասացիք թէ իմ ասածները ձեզ վրա ազդել են : Եսա էլ լաւ է ե- ղել, թո՞ղ ազդեն, գրանցից ոչ մի վեաս կը գայ ձեզ եւ ոչ գործին : Երանի՛ թէ ես սխալված լինեմ, ե- րանի՛ թէ իմ ակնարկած մարդիկ անկեղծութեան տիպարներ լինեն, գուցէ եւ այդպէս է : Յամենայն դէպս հարկաւոր է եւ այդ կասկածը, այդ թերահաւատութիւնը, որպէսզի միշտ մարդ պատրաստ լինի ամեն մի ան- ակնկալ երեւոյթի, Որոշ թերահաւա- տութիւնը զգայի հասարակական գոր- ծիչներու ունի եւ իր օգտակար կող- մերը : Պէտք է թերահաւատ լինել :

ՂԱՐԴՈ

(Շարունակելի)

յարգել ազգային նուիրական հաստատութիւններ, ի պահանջել հարկին քաջալերելով իրենց աշխատութեամբ իսկ :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Յիւրիս, Ուսանողին. — Ձեր յոգևածով թերթերը ուղարկեցինք, բայց փութան ետ բերաւ, կը խնդրենք որոշ հասցէ մը տուէք. նաեւ կը խնդրենք որ շարունակէք գրել :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Քանի մը ժամանակէ ի վեր Սուլթանը զբաղուած է թրքական պատգամաւորութիւն մը զրկել Չինաստան հոնտեղի մահմետականներէ հետ կապեր հաստատելու համար : Սուլթանը իր այդ մտադրութիւնը նախ կը յայտնէ ռուս զեսպանին, որը այդ դադարը անօգուտ գտնելով Սուլթանին խորհուրդ կուտայ իր մտքէն հրաժարիլ : Վերջը Սուլթանը ուրիշ զեսպանի մը ալ կը հաղորդէ :

Սուլթանը կուղէ իր մարդոց մով Չինացի մահմետականներուն քարոզել որ խաղաղ մնան և իրենց կայսեր հնազանդին :

— Պոլսոյ մէջ զրոյց կը պլըտուի թէ Սուլթանը հրաժարեր է Մակեթոնիա քննիչ յանձնախումբ մը զրկելու մտադրութենէն :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Անգլիական զօրավար նօքս և Պօէր զօրավար Տըվէթ պատերազմի բռնուած են, բայց հետեւանքը դեռ յայտնի չէ :

— Աւելեամ Մէյէրպախ, Օրանժի նախագահին թիկնապահը Մարսէլլ հասեր է Գերմանական Քանձէր շոգենաւով : Մէյէրպախ յայտարարած է թէ՛ ինք իր նախագահին կողմէ դիւանագիտական պաշտօնով մը զրկուած է Քրիւկէրի մօտ : Կուղէ հետեւիլ կատարուելիք բանակցութեան և մասնաւորապէս Օրանժը ներկայացնել : «Այժմէն չեմ կարող, ըսեր է, կարեւոր յայտնութիւններ ընել, մինչեւ Քրիւկէրը չի տեսնեմ : Եւրոպա չի գիտեր հարաւային Ափրիկէի տնտեսական և զինուորական վիճակը : Պօթա թրանսվալի և Տըվէթ Օրանժի մէջ երկաթէ կարգապահութեամբ զինուորական կազմակերպութիւն մը ստեղծած են :

Անգլիական զօրքերուն գործած վայրագութիւնները, կիրներու վրայ կատարուած բռնութիւնները հանրային զգացումները թունդ հանած են :

Մենք բացարձակապէս որոշած ենք, յայտարարել է Մէյէրպախ խաղաղութիւնը միմիայն անկախութեան հետ ընդունիլ : Պիտի պահանջենք որ, միայն դաշնագրերու վրայ պայմաններ նշանակելով չի գոհանան, անոնք կրնան շուտով բռնաբարուիլ : Մեր մնայուն բանակին պահպանումը կուզենք, և եթէ մերժեն ցմահ պիտի կռուինք :

— Օրանժի նախագահ Շթէյնի քարտուղար Քալէրթա Մարսիլիա հասեր է Քրիւկէրին հետ աջակցելու համար տէրութեանց մօտ ընելիք ձեռնարկներուն մէջ իբրեւ ներկայացուցիչ Օրանժի : Քալէրթա յայտարարած է որ պատերազմը երկար պիտի տեւէ, որովհետեւ Պօէրները դեռ երկու տարուան պաշար ունին կռուելու :

— Հօլանտայի նախարարապետը Քրիւկէրի յայտարարած է որ Հօլանտիոյ կառավարութիւնը պարտաւոր է խաղաղ դեր մը կատարել իրաւարարութեան խնդրին մէջ և կսպասէ որ մեծ պետութիւններէն մին նախաձեռնարկ ըլլայ :

— Բեթերսպուրկէ համալսարանի ուսանողները Քրիւկէրի համակրական հեռագիր մը քաշած են և նախագահը Ռուսիա կը հրաւիրեն :

— Քարի մէջ պաշտօնապէս յայտարարուած է որ Թրանսվալի անյբան ատելի Միլներ կառավարիչ նշանակուած է Օրանժի և Թրանսվալի :

— Բէքիւնէն կը հաղորդեն թէ՛ Խուսիա և Վիսերիկա կառավարկեն որ Չինաստանէն պահանջուելիք տուգանքի խընդիրը կարգադրուի Լահէր միջազգային իրաւարարատենի միջոցաւ, սակայն Գերմանիա և Անգլիա կը հակառակին պատճառաւանելով որ իրաւարարատենին անդամները ծանօթ չեն Մայրագոյն Արեւելքի խնդիրներու հետ :

— Լոնտոնէն Ֆրանսական թերթերու կը հեռագրեն որ՝ Տըվէթ կրկին յայտարարած է թշնամիի հետապնդումէն ազատել :

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Շանկայի թերթերը կը հաղորդեն թէ՛ մարտիտա Վալտէրգէի հրամանով Լի-Հունկ-Չանկի քարտուղարը ձերբակալուած է Պօքսէրներու հետ յարաբերութիւն ունենալու մէջ կասկածուելով :

— Բէքիւնի բոլոր զեսպանները, բացի Անգլիականէն, ստացեր են պետութեանց հրահանգները, որոնցմով անոնք կը ընդունին բանակցութեանց պայմանները :

Անգլիական զեսպանին ստանալուն կսպասուի անմիջապէս բանակցութիւնները սկսելու համար :

— Պօքսէրներու խռովութիւններէն յետոյ, Թիէնձենի և Իէքիւնի հաղորդակցութիւնը երկաթուղիով ընդհատուած էր, նոյնմբեր 29ին առաջին անգամ կառախումբը Իէքիւն հասած է :

— Շանկայէն Անգլիական թերթերուն կը հաղորդեն թէ՛ Եւրոպական զեսպանները որոշած են բանակցութեան չըմտնել Լի-Հունկ-Չանկի հետ, մինչեւ որ անոր լիազօրութեան վկայագրին վրայ Չինաստանի կայսեր կնիքը չը տեսնան :

— Հոնկ-Պօնկի մէջ պատերաւը վրայ յայտարարութիւն փակցուցած են Չինները, որով բնակիչները կը գրգռեն ապստամբել և կը յայտարարեն թէ՛ Չինական բոլոր գաղտնի ընկերութիւնները պետք է գալիք յունուարին միանան և ամէն օտարները արտաքսեն Չինաստանէն :

— Աֆրիքաններու համաժողովին որոշումները քանի մը պատգամաւորներ յանձնած են Միլներին : Միլներ պատասխանած է որ ինք այդ որոշումները պիտի ներկայացնէ Անգլիական կառավարութեան, թէեւ կը կասկածի թէ ինք պարտաւոր է այդպէս ընել :

Թ Ո Ւ Ս Ի Ա

Չարը աղէն ապաքինած է բժշկական տեղեկագիրները դադարած են : Բժիշկներու խորհրդով բոլորովին կազդուութիւն համար, պիտի մեկնի Սիկիլիա : Իսկ վերջը նիս :

Չարին հիւանդութիւնը մեծ մաստանջութեան մէջ ձգած էր ռուս քաղաքական բարձր շրջանակները, որովհետեւ եթէ վախճանէր, կայսրուհին կամ 6 ամիս խնամակալուհի պիտի ըլլար կամ 18 կէսօտարի : Վեց ամիս եթէ աղջիկ ծնէր, իսկ 18 տարի եթէ մանչ : Ի հարկէ կայսրուհին իբր ազատամիտ խնամակալուհի կամ վերջապէս իբր կին աւելի պիտի ուրիշներէ ազդուէր, և ռուսական քաղաքականութիւնը ալեծուր վիճակ մը պիտի ունենար :

Ներկայ կայսրուհին Եւրոպիոյ ամենազարգացած և ազատամիտ վեհապետութիւններէն մէկն է. և նիքօլա ձարին խորհրդակիցը անոր ազատամիտ գործերուն մէջ, մեծ հակառակորդը Ալէքսանտր երրորդի այրիին սր ռուս պահանջողական ազդեցիկ տարրին արամագրութիւններու եռանդուն արտայայտիչն ու պաշտպանն է :

Ի հարկէ ռուս պահանջողական և անպայման միապետականներու ջերմ ցանկութիւնն է նիքօլային պէս կակուղ և թոյլ կայսր մը ունենալ իրենց տրամագրութեան տակ քան թէ եռանդոտ խնամակալ կայսրուհի մը, որ ազատամիտ և զօրեղ մարդեր շատ պիտի կրնար գտնալ Բօքետօնօցէի-

ներու ազդեցութիւնը խորտակելու համար :

— «Պատերազմ» թերթի լսածին համեմատ Չարը շնորհիվ Վլատիմիր դուքսի և ռուս հոգեւորականութեան, Քրիւկէրը պիտի ընդունի :

Ա Ն Գ Լ Ի Ա

Անգլիական թերթի մը Հոովմի թղթակիցը կը հաղորդէ թէ՛ Անգլիական կառավարութիւնը պատեւ պահանջած է Մալթայէ՛ ճիզուիթները յետս կոչեն :

— Իրլանտացիներու մէջ նորէն խլրտումներ կան Անգլիոյ դէմ : Կառավարութիւնը քաջի մը նշանաւոր իրլանտացիներ ձերբակալել է :

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Յ. Կ. Պօլեմեթիսի
Ա. Տարի 60 սանթիմ, Բ. Տարի 1 ֆրանք, Գ. Տարի 1 ֆրանք :
Գոնէ 20 օրինակ գնողներու համար 15 0/0 զեղչ :
Վճարումները կանխիկ :
Յանձնարարութեանց համար գիմել յօրինողին սա հասցէով
Յ. Կ. Պօլեմեթիսի
(Պուլկարիա) Վառնա

ՉՈՒԱՐԱՆ «ԿՈՒԹԷՆՊԵՐ»

(Տպագրական տառերու)
Կարծր մետաղ . Ուղիղ կարգ
Հաշուար քարձրոքիւն
Ամէն լեզուէ տպագրական տառեր և զանազանք՝ գոհացուցիչ գներով :
Հասցէ՝
Fonderie typographique, Gutenberg, Sophia, Rue Graff Jgnatieff № 3, 19—25

Հ. Ս. ԷՓՐԻԿԵԱՆ

Պատկերագրող քննաշխատիկ բառարան
Այս հոյակապ գործին Բ. պրակն ալ հրատարակուած է :
Ա. պրակ զարգարուած 80 պատկերներով :
Բ. պրակ զարգարուած 91 պատկերներով :
Իւրաքանչիւր պրակ ճամբու ծախով կարժէ 3 ֆրանք :
Հասցէ՝
Imprimerie Armenienne St. Lazare (Italie) Venise

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցեատոմս, նամակագրուի, հարսանեկան հրաւիրագիր, մահազգէ :
Գրեցը յոյժ դիւրամատչելի :
Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :
ՅԱՆՉՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻԿ
Печатница Хр. Н. Войниковъ—Варна